



**«ՊԱՇՏՊԱՆԻՐ ՋՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔԸ» ԾՐԱԳՐԻ  
 ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ  
 ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՄՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ  
 «ԷԿՈԼՈՒՐ» ՀԿ-Ի ԱՆՑԿԱՑՐԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ  
 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ Արարատի մարզի Սայաթ Նովա համայնքը գտնվում է Արարատյան դաշտում՝ Հրազդան գետի ձախ ափին, ծովի մակարդակից 827 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Համայնքն ունի 1739 բնակիչ, 602 տնտեսություն, դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 496 հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 194 հա: Համայնքի բնակիչները զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Արոտավայրերը շուրջ 78 հա տարածք են զբաղեցնում: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքն ունի խմելու և ոռոգման ջրի խնդիր: Որպես խմելու ջուր համայնքն օգտագործում է արտեզյան ջրերը: Խմելու ջրամատակարարման համակարգը սպասարկում է համայնքը: Համայնքի խմելու ջրի ներհամայնքային ցանցն ունի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտություն, կեղտաջրերի ներթափանցումը

խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների պատճառ: Մայաթ Նովան չունի կոյուղի:

Մայաթ Նովա համայնքի ոռոգման համակարգը սպասարկում է «Երևան» ՋՕԸ-ի Մասիսի տեղամասը՝ Հրազդան գետից մեխանիկական եղանակով, պոմպերի միջոցով կատարվող ջրառով: Պոմպերի խափանման և հոսանք չլինելու դեպքում համայնքը զրկվում է ոռոգման ջրից: Համայնքի 60 հա հողերը վերջին տարիներին ոռոգվում են «Մասիս-Ձուկ» ձկնաբուծարանի հետադարձ ջրերով՝ 7 կետից: Այս աշխատանքներն իրականացվել են ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ, «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության» (ԳԱՏՕ) և «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրերի, և Հայ Օգնության Ֆոնդի շնորհիվ:

Ներկայումս համայնքը փնտրում է ֆինանսավորում՝ ձկնաբուծարանի հետադարձ ջրերով ևս 130 հա հողատարածքի ոռոգումն ապահովող համակարգի կառուցման համար:

2017-2021թթ. համայնքի զարգացման ծրագրում ջրային ոլորտում նախատեսվում են՝ ոռոգման ցանցերում կիսախողովակների տեղադրում, խմելու և ոռոգման ջրագծի կառուցում համապատասխանաբար 20,-300 և 53,0 միլիոն դրամ գումար ծախսերով:

Հաշվի առնելով, որ համայնքը եկամուտներ ստանալու քիչ հնարավորություն ունի, պարզ է դառնում, որ վերոնշյալ ծրագրային առաջարկներն առանց դրսի օգնության անհնար է իրականացնել:

Համայնքի տարածքում գործում է 4 ձկնաբուծարան՝ «Բիզամա ֆրուտ հայ-ռուսական» ՀԶ-Ն՝ 3,37 մլն խմ, /2 խորքային հոր/, «Գոլդեն ֆիշ-Կ» ՍՊԸ՝ 66,06 մլն խմ, /20 խորքային հոր, 3 տնտեսություն/, «Մաքս ֆիշ» ՍՊԸ՝ 70,7 մլն խմ /11 հոր/, «Մասիս ձուկ» ՍՊԸ՝ 20,2 մլն խմ /7 հոր/ ջրառի թույլտվությամբ: Գումարային ջրառը կազմում է 193,45 մլն խմ /49 հոր/:



### Նկ.1 Սայաթ Նովա համայնքի տեղադիրք

Ծրագրի «Հանդիպումներ բնակիչների հետ՝ խնդիրները լսելու և լուսաբանելու, հարցաթերթիկի լրացման համար» 1.1 բաղադրիչի շրջանակներում «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի թիմի Սայաթ Նովա համայնքում կայացած հանդիպման արդյունքում լրացվել է ջրի իրավունքի հետ կապված 19 հարցերից կազմված 10 հարցաթերթիկ:

Հարցման նպատակն էր պարզել.


- ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրության վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության աստիճանը
- բնակիչների ջրի իրավունքների խախտումների դեպքերը
- բնակչության՝ ջրի իրավունքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը
- վերջին տարիներին Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի նվազման պատճառներին վերաբերող բնակիչների գնահատականը
- ձկնային տնտեսությունների զարգացման վերաբերյալ բնակիչների մոտեցումները
- ոռոգման ջրի մատակարար ԶՕԸ-ի աշխատանքների գնահատականը

- ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու հարցում բնակիչների իրավունքների իրացման մակարդակը:

### **Հարցաթերթիկների վերլուծության արդյունքները**


1. Չնայած նրան, որ հարցվածների 88,88 %-ը պատասխանել է, որ ամբողջությամբ կամ մասամբ ծանոթ է ջրի իրավունքները սահմանող ՀՀ օրենսդրությանը, այնուամենայնիվ, դրական պատասխան տվողներից ոչ-ոք չի կարողացել նշել կարգավորող նորմատիվ ակտերի ամբողջականությունը, լավագույն դեպքում նշել են, որ այդ իրավունքները կարգավորվում են ՀՀ ջրային օրենսգրքով, կամ ոռոգման ջրի մատակարարման պայմանագրով:

2. Ըստ հարցման արդյունքների՝ վերջին 10 տարում խախտվել են ջրի նկատմամբ բնակիչների իրավունքները /հարցվածների 33,33%-ը նշել է, որ խախտվել են իրենց իրավունքները, իսկ 44,44%-ը դժվարացել են պատասխանել այդ հարցին, միայն 22,22%-ն է նշել, որ իրենց իրավունքները չեն խախտվել/, ինչն արտահայտվել է՝ կոմունալ-կենցաղային կարիքների բավարարման նպատակով անհրաժեշտ որակի և քանակի ջրի անբավարարությամբ /33,33%/, մշակովի հողատարածքների ոռոգման նպատակով անհրաժեշտ որակի և քանակի ջրի անբավարարությամբ /44,41%/, ոռոգումն ապահովող ՋՕԸ-ն ջրի բաշխման գործընթացում մշակաբույսերի վեգետացիան ապահովող անհրաժեշտ ջրի նորմանների անտեսմամբ /11,11%/:



**Նկ.2** Ջրի իրավունքների խախտման պատկերը Սայաթ-Նովա համայնքում

3. Ըստ հարցվածների՝ իրենք զրկվել են խմելու համար բավարար որակի և քանակի ջուր ունենալու իրավունքից /11,1%-ը կարծում է, որ խմելու ջուրը ձեռք է բերել տհաճ համ, 66.6 %-ը կարծում է, որ այն բավարար չէ, իսկ 22,2%-ը կարծում է, որ այն ընդհանրապես բացակայում է /:



**Նկ.3** Սայաթ-Նովա համայնքում խմելու ջրի փոփոխությունների դրսևորումները

4. Ըստ հարցվածների 88,9%-ի՝ արտեզյան հորերում ջրի մակարդակի իջնելու արդյունքում զրկվել են բավարար քանակի ոռոգման ջուր ունենալու իրավունքից:


5. Հարցվածների 66,66%-ը կարծում է, որ վճարվող ջրի սակագինը համարժեք չէ մատակարարված ջրի քանակին և որակին, իսկ 33,34%-ը կարծում է, որ այն համարժեք է:

6. 66,66%-ը կարծում է, որ զրկվել է աշխատանքի և սեփական ապրուստի եկամուտներ ունենալու իրավունքից, քանի որ զրկվել է բանջարանոցային կուլտուրաների մշակումից /50,0%/ և մշակովի հողատարածքներից /50,0 %/ ստացվող եկամուտներից:

7. 20,0%-ը կարծում է, որ ջրի խնդիրները և նրանց լուծման ճանապարհները չեն հանրայնացվում:


8. Համայնքի հարցված բնակիչների 62,5%-ը կարծում է, որ ջրի սակավությունը և խորքային հորերի ցամաքելու պատճառը պայմանավորված է Արարատյան ավազանի ստորերկրյա ջրերի ձկնաբուծու

թյան նպատակով անխնա և անսահմանափակ օգտագործմամբ, իսկ 12,5 %-ը դժվարացել է այդ կապը տեսնել: Հարցվածների 25,0%-ը կարծում է, որ ձկնաբուծության ծավալների մեծացումը չի ազդում ջրի սակավության և դրա որակական փոփոխությունների և խորքային հորերի ցամաքեցման վրա:



#### Նկ.4 Ձկնաբուծության ազդեցության գնահատականը համայնքի խմելու և ոռոգման ջրի քանակի վրա

9. Ըստ հարցվածների 38,46 %-ի՝ ոռոգման ջրի մատակարար «Երևան» ՋՕԸ-ն ոռոգման ջուրը բաշխում է անարդարացի, նույնքան հարցվածներ ուշադրություն չեն դարձրել այդ հանգամանքի վրա, իսկ 23,08 %-ը կարծում է, որ բաշխումն արդարացի է կատարվում:



#### Նկ.5. Բնակիչների տված գնահատականը «Երևան» ՋՕԸ-ին

ՋՕԸ-ն ոռոգելի տարածքների գլխամասը չի ապահովում ջրի հաշվառքի սարքերով /100%/, հետևապես այդ սարքի ստուգաչափման, ցուցմունքի գրանցման, ժամանակավորապես չաշխատելու դեպքում դրա կապարակնքման պայմանի մասին տեղյակ չէին: Ոռոգման ջրի մատակարարման պայմանագիրը ստորագրել են առանց դրանում ամրագրված պայմաններին ծանոթանալու / 88,89-%/:

10. Ջրի վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու և ստանալու հարցում բնակիչների վերաբերունքն ակտիվ չէ: Իրենց այդ իրավունքի իրացման նպատակով երբևէ չի օգտվել հարցվածների 46,6%-ը, իսկ 26,6%-ի հարցումներին չեն տրվել բավարար պատասխաններ: Ձկնաբուծության նպատակով համայնքի վարչական տարածքի հողերի վարձակալության տրված, կամ օտարված մակերեսների մասին ծանոթ չեն

հարցվածների 43,75%-ը: Հողերը ձկնաբուծության նպատակով վարձակալության տրման վերաբերյալ կայացրած որոշումների ընդունման մասին ավագանին ժամանակին չի իրազեկել համայնքի բնակչությանը / 50%-ը փաստում է, որ չի իրազեկվել, 43,75% –ը նշել է, որ դժվարանում է պատասխանել այդ հարցին/:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այսպիսով, հարցման արդյունքների բացահայտումների հիման վրա կարելի է **եզրակացություն** անել, որ Սայաթ-Նովա համայնքում խախտվել են՝

1. Բնակչի կյանքի և անվտանգությանը համար համապատասխան որակի և քանակի խմելու ջուր ունենալու իրավունքը:

2. Տարածաշրջանին առանձնահատուկ գյուղատնտեսությամբ զբաղվելու բնակչի աշխատանքի իրավունքը՝ դրա համար համապատասխան որակի և քանակի ոռոգման ջուր չունենալու հետևանքով:

3. Ջրային ոլորտում բնակչի տեղեկատվություն ստանալու իրավունքը

4. «Երևան» ՋՕԸ-ի հետ կնքված ոռոգման ջրի մատակարարման պայմանագրային իրավունքները:

*Սույն հաշվետվությունը կազմվել է «Պաշտպանիք ջրի նկատմամբ քո իրավունքը» ծրագրի շրջանակներում Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության միջոցով, որի ընթացքում արտահայտված տեսակետները կամ ներկայացված նյութերի բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*



2019թ.